



Ծրագիրը
համաֆինանսավորվել է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը
համաֆինանսավորվել է
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից

Իրականացնող՝
Հայաստանի երիտասարդ
իրավաբանների
ասոցիացիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության կենտրոն

Իրականացնող՝
«Գավառի
բիզնես
կենտրոն» ՀԿ

«ԳԱՎԱՌԻ ԲԻԶՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

**«ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ԳՈՐԾԻՔ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

«Մոնիթորինգը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք պետական եկամուտների հավաքագրման ոլորտում» ծրագիրը իրականացրել է «Գավառի բիզնես կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,138,500 ՀՀ դրամ, որից 970,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. հոկտեմբերի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

ք.Գավառ

2015թ.

Բովանդակություն

- 1. Նախաբան /հրավիճակի նկարագրություն/*
- 2. Խնդիրների և կոռուպցիոնոն ռիսկերի բացահայտում*
- 3. Մոնիթորինգի մեթոդաբանություն և գործիքներ*
- 4. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում և վերլուծություն*
- 5. Եզրակացություն*
- 6. Առաջարկություններ*

«Մոնիթորինգը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք պետական եկամուտների հավաքագրման ոլորտում» ծրագրի հաշվետվություն

1. Նախաբան /իրավիճակի նկարագրություն/

«Գավառի բիզնես կենտրոն» հասարակական կազմակերպությունը կարևորում է հարկային ոլորտում իրանացվող բարեփոխումների գործընթացում հանրության, հասարակական և հատկապես մասնագիտացված կառույցների մասնակցությունը, մասնավորապես՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով: Կազմակերպությունն իր ողջ գործունեության ընթացքում, տարբեր ոլորտների հետ աշխատելով առաջնահերթությունը մշտապես տվել է բիզնես ոլորտի խնդիրների բացահայտմանը, հիմնականում հարկային հարկային դաշտ-բիզնես հարաբերությունների թափանցիկության, տարածաշրջանում բարենպաստ բիզնես միջավայր ունենալու խնդիրներին: Կազմակերպության փորձագետները մասնագիտացված են ոլորտում, մշտապես հետամուտ են ոլորտային բարեփոխումներին և դրանց ազդեցության դիտարկմանը մարզի տնտեսության վրա:

Սերտ համագործակցություն է ձևավորվել մարզում գործող առևտրային, և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև պետական հատվածի հետ: Նրանց կողմից մշտապես ողջունվել է կազմակերպության նախաձեռնությունները: Մարզի բոլոր տարածքներում կազմակերպությունն ունի իր կողմից վերապատրաստված մասնագետներ, որոնք ունեն խորհրդատվություն մատուցելու, հարցումներ անցկացնելու, վերլուծություն կատարելու հմտություններ: Մարզում տարբեր հասարակական կազմակերպությունների, մեր կազմակերպության կողմից ևս իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, սակայն դրանք հարկային ոլորտի և հարկատուների խնդիրներին համարյա չեն անդրադարձել:

Եվ դրանով պայմանավորված «Գավառի բիզնես կենտրոն» ՀԿ-ն 2015թ, հուլիս-հոկտեմբեր ամիսներին իրականացրել է «Մոնիթորինգը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիք պետական եկամուտների հավաքագրման ոլորտում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ նպատակ ունենալով մոնիթորինգի միջոցով վերլուծել իրավիճակը հարկային ոլորտում և գնահատել ոլորտում կատարված բարեփոխումների ազդեցությունը մարզի տնտեսության զարգացման վրա:

Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

Կարևոր է նաև ոլորտում հանրության իրազեկության և հանրային վերահսկողության մակարդակների գնահատումը, քանի որ դրանցով են պայմանավորված ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն, ինչպես նաև չեզոքացումը: Ծրագրի շահառուներն են Գեղարքունիքի մարզում գործող բոլոր ոլորտների հարկատուները:

2. Խնդիրների և կոռուպցիոն ռիսկերի բացահայտում

Հակակոռուպցիոն ռազմավարությամբ պայմանավորված բարեփոխումները հարկային ոլորտում նպատակ ունեն բացահայտելու ոլորտում առկա հիմնախնդիրները, նվազեցնելու կոռուպցիոն ռիսկերը, մեծացնելու բարեխղճության սկզբունքների իրականացման ապահովումը պետական եկամուտների հավաքագրման ոլորտում: Ինչպես նաև բարձրացնել հաշվետվողականության, արհեստավարժության, էթիկայի կանոնների կիրառման, կոռուպցիայի կանխարգելման մակարդակը: Կարևորվում են նաև ոլորտային բարեփոխումների ազդեցությունը պետական ու տեղական մակարդակներում տնտեսության զարգացման վրա, և ՓՄՁ ներկայացուցիչների գնահատականը ոլորտային բարեփոխումներին: Վերլուծություն իրականացնելու և գնահատական տալու համար որպես գործիք կարևոր է ոլորտում մոնիթորինգի կիրառումը: Կատարված բարեփոխումներով հանդերձ, դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ: Հարկատուները բավականաչափ իրազեկված չեն, որոշ դեպքերում չեն տնտեսավարում գրագետ, չեն վարում հաշվառում և ցանկություն էլ չունեն որևէ բան փոխելու իրենց գործունեության մեջ: Առկա են նաև համակարգային խնդիրներ, որոնք առավել մտահոգիչ են ու կարևոր: Դրանք հնարավոր է քննարկել և վերլուծել հարկային տեսչություն-հարկատու միջավայրում հարցազրույցների, նամակների, դիտորդության օրերի, հանդիպումների և արդյունավետ երկխոսության միջոցով:

3. Մոնիթորինգի մեթոդաբանություն և գործիքներ

Ըստ նախնական հետազոտությունների՝ մոնիթորինգի առարկան հանրության լայն շրջանակների համար բավականին հետաքրքիր, վիճահարույց, ինչ որ չափով փակ ու նաև պակաս թափանցիկ ոլորտ է: Պետական եկամուտների հավաքագրման ոլորտում մոնիթորինգ իրականացնելու մեթոդաբանությունը հիմնվել է հարցումների անցկացման, զրույցների, հանդիպումների և այս ծրագրի իրականացման վերաբերյալ

տեղեկատվության տարածման վրա: Ծրագրի իրականացման ընթացքում փոխվեցին Գավառի տարածքային հարկային տեսչության պետը և բավականին թվով բաժնի պետեր և աշխատակիցներ: Հանգամանքը նշանակալից էր այնքանով, որ նախկին պետի օրոք երկխոսության եզրեր չկային և տարածքային հարկային ոլորտում անկառավարելի վիճակ էր, որը էապես խոչընդոտում էր տնտեսավարողների գործունեությանը: Կրկին անգամ հանդիպում է կազմակերպվել հարկային տեսչությունում, որտեղ զրուցել և քննարկել ենք ծրագրի նպատակն ու խնդիրները, ինչպես նաև ցանկացել ենք կանխատեսել ակնկալվող արդյունքները: Հանդիպումներ, զրույցներ, քննարկումներ իրականացվել են փոքր խմբերով կազմակերպության տարածքում, մարզի բոլոր տարածքների տարբեր կազմակերպություններում: Մոնիթորինգը իրականացվել է ծրագրով նախատեսված ու բազմաթիվ այլ հարկատուների ու անձանց հետ աշխատանքային, փոխադարձ վստահության և երկխոսության մթնոլորտում: Մոնիթորինգի արդյունքներն ու ամփոփումը ներկայացվել է տարածքային հարկային տեսչության քննարկմանը՝ դիտարկումներ լսելու ակնկալիքով:

«Գավառի բիզնես կենտրոն» հասարակական կազմակերպությունում կայացավ արդյունքի ամփոփում և քննարկում նաև տարածքի քաղաքացիական հասարակության մասնակցությամբ: Մոնիթորինգի ամփոփումը էլեկտրոնային եղանակով տարածվել է ծրագրի շահառուներին և հետքրքրված բազմաթիվ այլ անձանց:

Արդյունքների ամփոփումն արդեն լրացումներով և դիտարկումներով հանդերձ, նամակի տեսքով ներկայացվել է ՀՀ Ֆինանսների նախարարություն, որն արժանացել է հավանության: Ներկայացված փաթեթը լուծում կտա վեր հանված որոշակի խնդիրների: Իսկ մոնիթորինգի հիմնական գործիքը կազմակերպության փորձագետների կողմից պատրաստված հարցաթերթն էր՝ բաղկացած տասնյոթ հարցերից և առաջարկությունների բաժնից: Հարցաթերթը չի պարունակում հասցեավորված տեղեկատվություն հարցվողների վերաբերյալ, հաշվի առնվելով ոլորտի համակարգային առանձնահատկությունները և ռիսկը:

4. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում և վերլուծություն

Մոնիթորինգի ընթացքում հարցումներ են անցկացվել մարզի բոլոր տարածքում գործող 300 /երեք հարյուր/ հարկատուների և 200 /երկու հարյուր/ քաղաքացիների հետ: Կցվում է հարցումների ամփոփումը աղյուսակի տեսքով ու թվային վերլուծությամբ՝ որպես սույն հաշվետվության Հավելված 1:

Հարցումներ անցկացվել են Գեղարքունիքի մարզի ողջ տարածքում գործունեություն իրականացնող տարբեր ոլորտների նեկայացուցիչների հետ, որոնց կազմակերպություններն ունեն գործունեության տարբեր ժամանակահատվածներ, հիմնականում երկարատև:

Աղյուսակից երևում է, որ.

1. բոլոր հարցվողները գրանցված կազմակերպություններ են.
2. մեծամասնությունը չի վարում հաշվառում, քանի որ հարկային հաշվառումից բացի այլ հաշվառում չեն կարևորում.
3. հարկերը մեծամասամբ հավաքագրվում են ըստ հարկային տեսչության կողմից տրված պլանի.
4. Էլետրոնային համակարգի կիրառումը նվազեցրել է հարկային հաշվարկներ ներկայացնելու հանգամանքով պայմանավորված անձնական շփումները, հարկային օրացույցից հետ ընկնելը, որոնք էլ էապես նվազեցրել են կոռուպցիոն ռիսկերը.
5. յուրաքանչյուր ամսվա մինչև 20-ը բոլորն էլ սպասում են հարկային տեսուչի կամ զանգին, կամ այցին, փոքր ինչ թեթև է պարտադիր վճար կատարողների վիճակը.
6. հարկային ծառայողի վարքագծի կանոնների և ստուգումների ընթացակարգերի չպահպանելը հետևանք է հարկատուի անիրազեկության ու անգրագետ տնտեսավարման, ինչպես նաև որոշ դեպքերում հարկային ծառայողի կողմից իր իրավունքների չարաշահման.
7. հիմնականում հարկատուները չգիտեն հարկային ոլորտում օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնելու կարգի մասին կամ չեն տարբերում դրանք սովորական հարկային ընթացակարգերից, որից էլ օգտվում են հարկային տեսուչները.
8. շատ հաճախ երկխոսություն հարկային տեսչության և հարկատուի միջև չի ստացվում.
9. հարկային պաշտոնյայի հետ շփումներից առաջացած խնդիրների վերլուծությունները տեղիք են տալիս մտածելու հարկատուի գրագետ տնտեսավարման, ճիշտ հաշվապահական և ֆինանսական հաշվառման վարելու վերաբերյալ, ինչպես նաև հարկային ծառայողի կողմից բարեխղճության սկզբունքների կիրառման վերաբերյալ.
10. ցանկացած համակարգ պետք է գործի հստակ և լինի կայացած, իսկ պաշտոնյան պարտավոր է բարեխղճորեն և օրենքով սահմանված կարգով իրականացնել պետության կողմից իրեն տրված լիազորությունները, սակայն

- երբեմն այդպես չէ: Պատահում է, որ հարկային համակարգում պաշտոնյայի փոփոխությունը ուղղակի ազդեցություն է ունենում բիզնես միջավայրի վրա,
11. ցավալի է, բայց ոլորտի բարեփոխումների արդյունքում մարգում դեռևս տնտեսական աճ իրականում չի արձանագրել.
 12. ոլորտի բարեփոխումները չեն ազդել նաև մաքսային ոլորտում տեղ գտած անհավասար մոտեցումներին.
 13. հակառակ բարեփոխումների նպատակին, ոլորտում դեռևս խնդիրները լուծվում են անձնական շփումների, հանդիպումների արդյունքում, ըստ անկեղծ գրույցների՝ նախաձեռնությունը երկկողմանի է.
 14. մոնիթորինգի ողջ ընթացքում մոտեցել ու հեռացել ենք հարկային ծառայողի կողմից բարեխղճության սկզբունքների ապահովման թեմային, որը նրանք իրենց կերպ են մեկնաբանում և կիրառում, հիմնականում հարկատուի շահերին անհարիր.
 15. թե ի՞նչ բան է հանրային վերահսկողությունը, հատկապես պետական եկամուտների հավաքագրման ոլորտում, պատկերացում անգամ չկա, թե ինչի՞ վրա են ծախսվում դեռևս 2003թ.ից աղքատ ճանաչված, բանկային դաժան քաղաքականություն իրականացվող մարգում տնտեսավարողների կողմից վճարված հարկերը, կամ ինչպե՞ս են դրանք հավաքագրվում.
 16. հարկային ոլորտում կոռուպցիոն ռիսկերը դեռևս առկա են, սակայն դրանց մասին դժվարությամբ կամ ընդհանրապես չեն բարձրաձայնվում.
 17. շատերը ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան շփոթել են հակակոռուպցիոն մարմնի հետ:

**** Առաջարկություններ բաժնում մեծ տեղ է տրվել հարկային բեռի թեթևացման հանգամանքին, հարկերի հաշվարկման և վճարման գործընթացը գործող օրենսդրությանը համապատասխան իրականացնելուն, ինչպես նաև իրականացնել արդյունավետ երկոսություն՝ հարկատուի և հարկային համակարգի հետ:***

5. Եզրակացություն

Համաձայն ՀՀ օրենսդրության ու այլ իրավական ակտերի պահանջների, հարկատուն հավասար պայմանների դեպքում կարող է իրականացնել արդյունավետ տնտեսական գործունեություն, տնտեսվարի հոգեկան ավելի խաղաղ վիճակում և կենտրոնանա իր տնտեսության և դրա զարգացման հնարավոր ուղիների որոնման վրա, քան հարկային տեսուչի ու նրա կատարած գործողությունների վրա: Սակայն առկա են լուծում պահանջող համակարգային խնդիրներ, նաև առկա են խնդիրներ, որոնց զարգացմանը նպաստում են հենց հարկատուները, չգնահատելով իրենց պարտականությունների

կատարումը, չճանաչելով իրենց իրավունքները: Մոնիթորինգի արդյունքների ամփոփումից պարզվեց, որ հարկատուների մեծ մասը վատ են իրազեկված, չեն վարում հաշվապահական և ֆինանսական հաշվառում, լավ տեղեկացված չեն ոլորտը կարգավորող օրենսդրությանը, չեն կարող ցանկացած պահի գնահատել հարկային տեսուչի գործողությունների օրինականությունը, երկխոսությունը հարկային տեսչության հետ չեն ընկալում ըստ նշանակության: Դրանցով էլ պայմանավորված են կոռուպցիոն ռիսկերը:

Առկա են նաև համակարգային խնդիրներ, իսպառ բացակայում է հանրային վերահսկողությունը, իսկ հակակոռուպցիոն գործունեություն իրականացնող մարմինների մասին հանրությունը տեղյակ չէ կամ անվստահորեն է դրան վերաբերվում:

6. Առաջարկություններ

Ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների և մոնիթորինգի արդյունքների հիման վրա, պետական եմակուտների հավաքագրման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով, առաջարկում ենք՝

- ավելի հաճախ կազմակերպել քննարկումներ, տեղեկատվական սեմինարներ, բարձրացնել հարկատուների իրազեկվածության մակարդակը.
- պետական եկամուտների հավաքագրումը պլանավորելիս հաշվի առնել մարզերում գոյություն ունեցող տնտեսական վիճակն ու անբարենպաստ բիզնես միջավայրը, պլանավորումը համապատասխանեցնել հարկ վճարողի հաշվարկների հետ.
- հարկային ծառայողի վարքածի սահմանած կանոնների կիրառումը հասցնել ցանկալի մակարդակի.
- նպաստել արդյունավետ երկխոսության ձևավորմանը՝ հարկային տեսչության և ՓՄՁ-ների միջև, ստեղծել աշխատանքային անկաշկանդ և վստահության վրա հիմնված մթնոլորտ.
- նպաստել հանրային վերահսկողության մեխանիզմների ստեղծմանը և դրանց կիրառմանը:

Ի վերջո պետական եկամուտների հավաքագրման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերն ունեն օբյեկտիվ բնույթ, դրանք համակարգային խնդիրներն են՝ պայմանավորված ընթացակարգերի որոշակի շեղումների կիրառմամբ, հարկատուների բարենպաստ բիզնես միջավայրում տնտեսավարելու հնարավորության բացակայությամբ, ինչպես նաև մեծամասամբ՝ նրանց ոչ գրագետ տնտեսավարմամբ:

Իրականացնող՝ Գավառի բիզնես կենտրոն» ՀԿ

ՀԿ նախագահ և ծրագրի ղեկավար՝

Անահիտ Շահգադյան

Ծրագրի փորձագետներ՝ Անահիտ Շահգադյան, Վարդան Ղաջոյան

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Գր. Լուսավորչի 3,

Հեռ. (0264) 2 69 31, 096 17 58 49,

Էլ. փոստ՝ gbcngo@gmail.com